# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Վարդանյանշին» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս 17/1 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և նախագծային փաստաթղթի վերաբերյալ 2-րդ հանրային լսման**

24.03.2026թ. Նոր գյուղ բնակավայր

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն), Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի իրականացված ծանուցման համաձայն՝ 2026 թվականի մարտի 24-ին՝ ժամը 11:00-ին Նոր գյուղ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվեց «Վարդանյանշին» ՍՊԸ-ի կողմից Նոր գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս 17/1 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և գործունեության փորձաքննական գործընթացի վերաբերյալ երկրորդ հանրային լսում:

Հանրային լսմանը ներկա էին Ակունք համայնքի ներկայացուցիչները, Նոր գյուղ բնակավայրի վարչական ղեկավարը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետը, նախաձեռնողի ներկայացուցիչները, ազդակիր բնակավայրի բնակիչները և այլ մասնակիցներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ հանրային լսման պատասխանատու Ա. Վարդանյանը, ներկայացրեց փորձաքննական գործընթացի ընթացակարգը, օրենսդրական կարգավորումները, դիտողությունների և առաջարկությունների շրջանակը և ներկայացման կարգը, ժամկետները և այլն: Այնուհետև խոսքը փոխանցեց նախաձեռնող ընկերության նախագծային փաստաթղթերի ճարտարապետին, ով ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները և այլն:

Նախատեսվող գործունեությունը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում հարց-պատասխան ձևաչափով: Հարցերը հիմնականում վերաբերում էին նախատեսվող գործունեության համար դիտարկվող տարածքի նկարագրին (տարածքում ծառաբուսականությունը բացակայում է), ընդհանուր օգտագործման ճանապարհի կառուցման, 1 կմ հեռավորության վրա գտնվող գերեզմանոցին, տարածքում կառուցվող մանկապարտեզին, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմաններին և դրանց բավարարմանը, հարկայնությանը՝ նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները՝ հաստատված հիմնադրությային փաստաթղթով և այլն:

Ա. Մինասյանը ներկայացրեց, որ Ակունք համայնքը դիմել է միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու նպատակով և ունեն Քաղաքաշինության կոմիտեի դրական պատասխանը և հավելեց, որ գործընթացն ընթացքի մեջ է:

Ճարտարապետ նշեց, որ 540.0 քմ կառուցվող ճանապարհը ծառայելու է որպես համայնքային ընդհանուր օգտագործման ճանապարհ:

Նախաձեռնող կողմը ներկայացրեց նաև բնակարանների ձեռք բերման կարգը և հավաստիացրեց բնակիչներին՝ որ իրենք որպես ազդակիր բնակավայրի բնակիչներ ունենալու են հավելյալ զեղչեր:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չհնչեցին, համայնքի բնակիչներն իրենց գոհունակությունը հայտնեցին նախատեսվող գործունեությանը:

Փորձագետը նշեց, որ նախաձեռնողը հետևելու է Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսվելու են հավելյալ միջոցառումներ: Հավելեց նաև, որ համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չհնչեցին:

Հանրային լսումները նկարահանվել է:

Հանրային լսումների մասնակիցների ցանկը կցված է արձանագրությանը:

Լսումների վարող, պատասխանատու
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան

«Վարդանյանշին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Վարդանյան